

ԴԱՐՁԿԱԾՔՆԵՐԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ

Սույն հոդվածը քննարկում է հայերենի, ռուսերենի և անգլերենի դարձվածքների ստուգաբանությանն առնչվող մի շարք հարցեր:

Ստուգաբանությունը զբաղվում է բառերի ու դրանց բաղադրիչների ծագման, սկզբնական ձևի ու իմաստի, կազմության, լեզվական դերի ու գործառության, հետագա զարգացման ու փոփոխությունների ուսումնասիրությամբ: Ստուգաբանությունը մի կողմից հենվում է պատմական իմաստաբանության, մյուս կողմից՝ պատմական հնչյունաբանության վրա: Պատմական իմաստաբանության ուսումնասիրության առարկան լեզվական միավորների պատմականորեն կրած իմաստային փոփոխությունները, դրանց ընդհանուր օրինաչափությունները, այդ փոփոխությունները պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներն են: Այն պահանջում է լեզվական միավորների իմաստների փոփոխության հասարակական և անհատական գործոնների, տնտեսական-քաղաքական, գաղափարական և կենցաղային փոփոխությունների, ինչպես նաև հոգեկան այն գործընթացների լուսաբանություն, որոնք պայմանավորում են իմաստային փոփոխություններն ընդհանրապես և այս կամ այն որոշակի իմաստափոխությունը՝ մասնավորապես: Բառերի և լեզվական այլ միավորների իմաստների պատմական հետազոտության ժամանակ հաշվի են առնվում նյութական մշակույթի, պատմության տվյալները, ներլեզվական և արտալեզվական իրողությունների ընձեռած փաստերը:¹ Ինչպես նշվեց վերը, ստուգաբանական վերլուծության կարող են ենթարկվել ոչ միայն բառերն ու դրանց բաղադրիչները, այլև լեզվական այլ միավորներ՝ մասնավորապես դարձվածքային միավորները¹: Դարձվածքներում ժողովուրդը դիմում է կյանքի ամենաբազմազան կողմերին, համադրության մեջ դնում ամենատարբեր երևույթներ, որոնք էլ հենց դարձվածքների առաջացման աղբյուր են: Լեզվական այս միավորների առաջացման աղբյուրները բազմաթիվ են, օրինակ, ժողովրդական-բնախոսական մեկնաբանությունները, բանահյուսությունն ու գրականությունը, ազգային, ավանդությունները, սովորությունները, հավատալիքները և այլն: Դարձվածային միավորների առաջացման մեկ այլ աղբյուր է Աստվածաշունչը: Հիշյալ և այլ աղբյուրներից առաջ եկած դարձվածքները ձևավորվում են ոճական տարբեր

¹ Սղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, հ. 1, Ե., 1966:

հնարներով, որոնցից ամենատարածվածներն են փոխաբերությունը, փոխանունությունը, համեմատությունը, չափազանցումը, շրջասությունը:

Դարձվածքների ստուգաբանության ընթացքում անհրաժեշտ է լրջորեն և ճանրամասն դիտարկել նաև ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, ազգագրության, հոգեբանության, բանագիտության, գրականագիտության, արվեստաբանության և այլ գիտությունների տվյալները: Միայն այս կերպ հնարավոր կլինի պատասխանել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ո՞րն է տվյալ դարձվածքի առանձին բաղադրիչների և նրա ամբողջական իմաստների միջև եղած կապը, իրականության ո՞ր երևույթի հիման վրա է ձևավորվել դարձվածքը, ո՞ր հեղինակն է առաջինն օգտագործել այն, կամ լեզվի ոճական ո՞ր ոլորտից, կյանքի ո՞ր բնագավառից, կամ ո՞ր լեզվից է այն հայտնվում տվյալ լեզվում²:

Դարձվածքների ստուգաբանական վերլուծության համար անհրաժեշտ է պարզել նախ դարձվածքի ծագման աղբյուրը և երկրորդ՝ որոշել, թե ոճական ո՞ր հնարքով է այն ձևավորվել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև մեծ թվով դարձվածքների ստուգաբանությունն առանձին դժվարություն չի ներկայացնում, սակայն կան նաև այնպիսիք, որոնց համար պահանջվում է բանասիրական լուրջ հետազոտություն:

Առաջին կարգի դարձվածքների ստուգաբանությունը կատարվում է՝ ելնելով հենց դարձվածքներից՝ առանց լրացուցիչ տվյալների: Այս դարձվածքները հիմնականում փոխաբերություններ, փոխանունություններ, չափազանցումներ ու շրջասություններ են³, օրինակ՝ գրի սևն ու սպիտակը ջոկել (ջիչ թե շատ գրագետ լինել), գլուխը պահել (ապրել), *a red rag to a bull* (ինչ-որ բարկացնող բան), *зеленая улица* (ազատ գործելու հնարավորություն), *забравать в голову* (մի բան գլուխը մտցնել, անընդհատ մի բանի մասին մտածել, համառել), *набострывать уши* (ականջները սրել, լսողությունը լարել):

Երկրորդ խմբի դարձվածքների դեպքում անհրաժեշտ է պարզել վերը նշված թե մեկ, թե մյուս համգամանքները, այսպես օրինակ՝ «ատամին/ատամով տալ» (ուժը փործել) դարձվածքը ծագում է հայերի մեջ տարածված ծվակոճիվներից, երբ ծվի ամրությունը նախապես իմանալու համար այն խփում էին ատամներին:

Կանաչ-կարմիր կապել (ամուսնացնել) դարձվածքը գալիս է ժողովրդական այն հին ավանդույթից, որ նորապսակները հաճախ կապում էին կանաչ-կարմիր նարտո, որը վերցնելուց հետո նրանք կարող էին ամուսիններ դառնալ:

Գլխին մոխիր ածել դարձվածքը գալիս է վիշտ ունեցող կամ սուգ պահող անձանց գլխին մոխիր ցանելու, լցնելու սովորությունից:

² Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 75:

³ Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., 1969, էջ 81:

Հապիկի փեշը գլխին քաշել(որդեգրել) դարձվածքն ըստ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» գալիս է հայկական ազգային այն ծեսից, որի համաձայն ուրիշի երեխային որդեգրելիս կինը իր շապիկի միջով անց է կացնում նրան կամ շապիկի փեշը նրա գլխին է քաշում որպես նշան այն բանի, թե երեխային ինքն է լույս աշխարհի բերել:

Լեզու հանել (աղաչել) դարձվածքի ծագումը թերևս կարելի է բացատրել նրանով, որ ժողովրդի մեջ կա այն հավատալիքը, թե երբ մարդկանց տեսնելիս իժը հանում է լեզուն ու տարուբերում, դրանով իսկ աղաչելով, որ իրեն չսպանեն:

Չեռք տալ (ծեմնտու լինել) դարձվածքն ըստ Մ.Աբեղյանի գալիս է շուկայում գործող մի սովորությունից, որի համաձայն վաճառող և գնող կողմերը ապրանքի վերջնական գինը որոշելով, որպես համաձայության և բավարարվածության նշան իրար ձեռքի էին խփում:

Ականջը ծվալ (կռահել, որ իր մասին են խոսում) դարձվածքը ծագում է ժողովրդական այն հավատալիքից, թե երբ մեկի անունը ռերիշները հիշում են ականջում զնգոց է լսվում:

Ճակատը պինդ (համառ, տոկուն) դարձվածքը գալիս է Անդրկովկասում տարածված խոյերի կովից, որոնք մենամարտելիս ճակատ ճակատի էին զարկում:

Գլխին գայլի ավետարան կարդալ (անտեղի խորհուրդներ, խրատներ տալ) դարձվածքը ծագում է «Գայլի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ Շուտ արեք, ոչխարը սարը գնաց» առածից:

Չեռքը ծանր, ոտքը ծանր (անբարեհաջող) կամ **աչքը չար** (աղետի կամ անհաջողության աղբյուր) դարձվածքները գալիս են ժողովրդական այն հավատալիքներից, թե որոշ դեպքերում մարդկանց (հաճախ չար անձանց) գալուստն ու գործունեությունը ձախորդություն, վնաս, աղետ է բերում: Սրան հակառակ հաջողության պատճառ դառնալու մասին էլ ասվում է **աչքը բարի, ձեռքը թեթև, ոտքը թեթև** և այլն⁴:

Ռուսերենում կիրառվող «сказка про белого бычка» (ինչ-որ բանի անընդհատ, անհմաստ կրկնություն) դարձվածքը գալիս է ռուսական այն հեքիաթից, ուր ծաղրվում են այն երեխաները, որոնք անընդհատ խնդրում են նորից ու նորից պատմել միևնույն հեքիաթը:

“Пычмушь ныль в глаза” (պարծենալով խաբել) դարձվածքը ֆրանսերենի “jeter de la poudre aux yeux” դարձվածքի պատճենում է, որը հավանաբար գալիս է 18-րդ դարից, երբ որպես ռազմական հնարք թշնամու աչքերին

⁴ Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. I-IV, Ե., 1944-1945:

Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

փոշի էին գցում: Ամենայն հավանականությամբ ռուսերենի միջոցով հիշյալ դարձվածքը անցել է մաև հայերենին, ուր հիշյալ միավորը հանդիպում է աչքերին թող / հող / փոշի գցել / ցանել / ածել ձևերով: Ի դեպ, նույն դարձվածքն առկա է մաև անգլերենում՝ *throw dust into sb's eyes*.

“Держать нос по ветру” (հարմարվել հանգամանքներին) դարձվածքը հավանաբար առաջ է եկել նավաստիների խոսակցական լեզվում, քանի որ սկզբնապես նկատի են ունեցել նավի քիթը (քթամասը, առաջամասը):

На большаю палец (շատ լավ, գերեզանց) դարձվածքը հավանաբար ծագում է հոռմենացիների այն սովորույթից, որ նրանք ցլամարտիկների կոիվները դիտելիս բարձրացնում կամ իջեցնում էին բութ մատը, ինչը զիժաթափված կամ դատապարտված ցլամարտիկին սպանելու կամ կենդանի թողնելու ազդանշան էր համարվում:

Плыть в руку (առանց մեծ ջանքերի ձեռք բերել) դարձվածքի աղբյուրը հավանաբար *«По шучьему велению»* հեքիաթն է, ըստ որի Եմելի ձեռքում հայտնված շնածուկը մեծ երջանկություն է պարգևում:

Спать без задних ног (հոգնած լինելով՝ շատ խորը քնել) դարձվածքն առաջ է եկել կենդանիների քնի հետ կատարած համեմատությունից: Ծանր աշխատանքից հետո ծին քնում է՝ ետևի ոտքերը լրիվ թուլացրած և արթնացնելիս՝ փորձում է առջևի ոտքերի վրա կանգնել:

Сему нядеи во лбу (շատ խելոք, ընդունակ) դարձվածքի հիմքում ընկած է չափազանցությունը:

Носить на руках (հոգ տանել մեկի մասին) դարձվածքը գալիս է այն սովորույթից, որ հարսանիքի ժամանակ փեսացուն հարսնացուին իր տան շենքից ներս էր տանում քների վրա: Ավելի վաղ այս բանն արվում էր ոգեպաշտական նկատառումներով, քանզի համարվում էր, որ հատակապես հարսանիքի օրը հարսնացուն կարող էր ենթարկվել չար ոգիների ազդեցության, նրա վրա կարող են զայրանալ փեսացուի մախնիների ոգիները, ովքեր ապրում են նրա տան շենքին: Ներկայումս էլ այս դարձվածքն օգտագործվում է հիմնականում սիրելի կնոջ վերաբերմամբ:

Ոգեպաշտական նկատառումների ծնունդ է մաև *закрывать, закрывать глаза(кому)* (մեռնողի կողքին լինել մահվան պահին) դարձվածքը: Սա արվում էր, որովհետև կարծում էին, որ բաց աչքերով հանգուցյալը իր համար զոհ կփնտրի⁵:

⁵ Шанский Н. М., Зинин В. И. Филиппов А. В., Опыт этимологического словаря русского языка, М., 1987.

Толковый словарь русского языка под ред. Ушакова Д. Н., Т 1-4, М., 1935-1940.
Фразеологический словарь русского языка под ред. Молоткова А. И., М., 1978.

Անգլերենում, օրինակ, ըստ հին անգլերենի բառարանի "blue stocking" (բառացի՝ կապույտ գուլպա - չոր, կանացիությունից զուրկ կին) դարձվածքը սկսել է օգտագործվել 17-րդ դարի կեսից: Լոնդոնում տ. Մոնրեկի, տ. Վեսիի տներում կազմակերպված երեկույթները հետագայում վերածվեցին այնպիսի հավաքույթների, որոնց ընթացքում տեղի էին ունենում զրույցներ գրական թեմաների շուրջ: Այս հավաքույթներին հաճախ մասնակցում էին նշանավոր գրողներ: Վերջիններիս մեջ էր Բենջամին Սթիվենսֆիլդը. նա սովորաբար կապույտ գուլպաներ էր հագնում: Ասում են որ այդ էր պատճառը, որ ադմիրալ Բոսկավենը այս խմբակն անվանեց "Blue Stocking"-ի (կապույտ գուլպայի) կազմակերպություն (ընդ որում, կապույտ հագուստն այլևս այս հավաքույթների բաղադրիչ տարրը չէր): Վերափոխումներին աջակցող կանանց սկզբում անվանում էին Blue Stockingers կամ Blue Stocking Ladies (կապույտ գուլպայով կանայք), որ սկզբնապես վերաբերում էր այս հավաքույթներին հաճախող, հետագայում նաև գիտությամբ և գրականությամբ զբաղվող կանանց:

"Put on the black cap" - (բառացի՝ սև գլխարկ դնել - մեղադրանք ներկայացնել) դարձվածքը ծագում է անգլիական այն ավանդույթից, երբ դատավորը մահվան վճիռ կայացնելիս սև գլխարկ էր հագնում:

"Wash one's hands" - (բառացի՝ ձեռքերը լվանալ- պատասխանատվությունից խուսափել) դարձվածքը Աստվածաշնչից է, որում Պիղատոսը Յիսուսին մատնելուց հետո ժողովրդի առջև լվանում է ձեռքերը՝ փորձելով ապացուցել այդ գործում իր անմասն լինելը:

The hair of the dog that bit you (բառացի՝ այն շան մազը, որ կծեց քեզ- հարբածությունից նույն խմիչքով կսթափվես) դարձվածքը հավանաբար գալիս է այն մտայնությունից, որ շան այրված մազը բուժում է հենց այդ շան կծածը:

Grease one's palm (բառացի ափը յուղոտել- կաշառել) դարձվածքը, որն ի սկզբանե օգտագործվում էր grease one's hand (բառացի ձեռքը յուղոտել) ձևով, առաջին անգամ գործածվել է 1526 թ. բանաստեղծ Ջոն Սքելթոնի կողմից: Այդ ժամանակից ի վեր դարձվածքը նշանակել է կաշառել կամ թեյալճար տալ մեկին, ինչի հետևանքով, ենթադրվում էր, որ նա ավելի լավ կաշխատի ձեզ համար:

Hearts and flowers (բառացի սիրտ և ծաղիկներ- զգացմունքայնություն): Սա 1910 թ. ժողովրդականություն վայելող մի երգի վերնագիր էր: Ջութակահարների կատարմամբ այս երգը միշտ ուղեկցում էր զգացմունքային դրամաներին: Մարդիկ մտովի երգում էին այս երգը, երբ լսում էին մի տխուր պատմություն: Շուտով երգը մոռացվեց, սակայն ձևավորված դարձվածքը պահպանվել է:

Tongue in cheek (բառացի լեզուն այտի մեջ- ոչ լսնկեղծ) դարձվածքն առաջին անգամ հորինել և օգտագործել է Ռիչարդ Բարիամը իր Ingoldsby

Legends գործում 1845թ. Թե ինչու նա օգտագործեց այս դարձվածքը պարզ չէ, հատկապես այն պատճառով, որ եթե որևէ մեկը լեզուն խոսելիս այտի մեջ պահի, ապա նրա ասածն ընդհանրապես չի հասկացվի:

Walls have ears (բառացի պատերն ականջներ ունեն- զգույշ, ասածներդ կարող են լսվել) դարձվածքը հավանաբար գալիս է հին Հունաստանից: Սիրա- կուզայի բռնակալ Դիոնիսիոսը իր սենյակից մի խողովակ էր անցկացրել իր սենյակի ներքևում գտնվող բանտի պատի մեջ, որպեսզի լսի բանտարկյալների խոսակցությունը: Խողովակի ծայրը նույնիսկ ականջի ձև ուներ: Կատերինա Մեդիչին՝ Ֆրանսիայի թագուհին 16-րդ դարում Լուվրում ուներ մի քանի սենյակ, որոնցից կարող էր լսել իր դեմ նյութվող դավերի մասին: 1960թ. հիշյալ դարձվածքը շրջվեց դառնալով **the ears have walls** (բառացի ականջները պատեր ունեն), որը նշանակում է, որ իշխանավորները անընդունակ են լսելու⁶:

Յուրաքանչյուր լեզվում, այդ թվում և՛ հայերենում, ռուսերենում, և՛ անգլերենում կան բազմաթիվ դարձվածքներ, որ դեռ ստուգաբանված չեն, կամ որոնց բացատրությունները հավանական չեն թվում, օրինակ՝ սև ջուր կտրել (սատկել), բերանը յոթ ջուր լվանալ (բարձրաստիճան մարդու դեմ խոսել), կրունկը ծակ (շատ նրբամիտ), ոտքը ջուր կախել (ոչ մեկից չվախենալ), *держать в черном теле* (վատ, դաժանորեն վարվել մեկի հետ), *доставать до рыка* (մեկին կործանել), *палец в рот не клади* (զգուշացիր, մեկը կարող է իր շահի համար քեզ վնասել), *see red* (շատ զայրանալ, կատաղել), *set sb by ears* (կռվեցնել, գժտեցնել իրար հետ), *have a bone in one's leg* (շատ հոգնած լինել) և այլն:

Ինչպես նկատում ենք, դիտարկված դարձվածքներից մի քանիսը հատուկ են միայն այս կամ այն լեզվին, սակայն մի քանիսն էլ ունեն իրենց համարժեքներն ուսումնասիրվող լեզուներից երկուսում կամ երեքում, օրինակ՝ Գլխին մոխիր ցանել- *посыпать голову пеплом*, Ատամին տալ – *на зуб*, ճակատը պինդ- *медный лоб*, Ականջը ծվալ- *one's ears are burning*, Լեզու հանել – *высунуть язык* – *put out one's tongue*, Ձեռք տալ – *по рукам*, strike hands, Չար աչք – *дурной глаз*, evil eye, *Закрывать глаза* – Աչքերը փակել, *Пускать пыль в глаза* – աչքերին թոզ փչել, *throw dust into sb's eyes*, *Держать нос по ветру* – քիթը քամուն բռնել, *Blue stocking* – *синий чулок*, *wash one's hands*- ձեռքերը լվանալ, *умывать руку*, *Grease sb's palm*- փրկ յուղոտել, **Walls have ears** – պատերն ականջներ ունեն, *у стен есть уши*.

⁶ Hendrickson R., The Facts on File Encyclopedia of Word and Phrase Origins, USA, 2000
Brewer's Dictionary of Phrase and Fable, GB, 1968.
The Old English Dictionary, vol. 1-12, Oxford, 1961.

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերոհիշյալ համարժեքներից մի քանիսն ամբողջությամբ համընկնում են իրենց արտահայտած իմաստներով, մինչդեռ մեկ-երկուսը միայն մեկ իմաստով, այսպես, օրինակ՝ **լեզու հանել** դարձվածքը իր երեք իմաստներից միայն մեկով է համարժեք ռուսերենի և անգլերենի դարձվածքներին: Ռուսերենի **держать нос по ветру** դարձվածքն իր իմաստով համարժեք է հայերեն դարձվածքի երկու իմաստներից մեկին, **wash one's hands** դարձվածքն ունի իր համարժեքները հայերենում և ռուսերենում: Եթե ռուսերենի **умывать руки** դարձվածքը իմաստային առումով լրիվ համընկնում է անգլերենի դարձվածքին, ապա հայերենի դարձվածքը ձեռք է բերել նաև երկրորդ *հուսահատվելու, մի բանից հույսը կտրելու իմաստը*: Հայերենի **ճակատը պինդ** և ռուսերենի **медный лоб** դարձվածքները թեև իմաստային համարժեքներ են (հայերեն դարձվածքը միայն իր մեկ իմաստով է համարժեք), սակայն հարկ է նշել, որ այստեղ առկա են իմաստային նրբերանգներ: Եթե ռուսերենի դարձվածքն ունի *անմտորեն համառ, բութ ու սահմանափակ մարդ* նրբիմաստը, ապա հայերենի դարձվածքի նրբիմաստն է *տոկուն, դիմացկուն* լինելը (այստեղ կանգ չենք առնում հիշյալ դարձվածքների առանձնահատկությունների վրա): Համարժեք դարձվածքների շարքում նկատվում են նաև այնպիսիք, որոնցում իմաստային առումով ոչ գլխավոր բառն արատահայտվում է այլ բաղադրիչով (**պինդ**- **медный**, **ծվալ**- **burn**) և այլն:

Մի՞շտ են, արդյոք այս համարժեքները պատճենման արդյունք, թե՞ որոշ դեպքերում պարզապես գործ ունենք տարբեր ժողովուրդների լեզուներում անկախաբար առաջացած համարժեք դարձվածքների կամ պատահական համընկնումների հետ: Մի՞թե տարբեր ժողովուրդներ չէին կարող նույն դիտարկումը կատարել և, հանգելով նույնանման եզրակացության, կազմել նույն իմաստ դարձվածքներ, նույնիսկ կառուցվածքային հնարավոր տարբերություններով: Օրինակ՝ թե հայերը, թե ռուսներն ու անգլիացիները կարող էին նկատել, որ մեկին սաստիկ ծեծելիս ծեծվողի մաշկը պատվում է սև ու կապույտ բծերով՝ այստեղից էլ՝ երեք լեզուներում սև կապույտ բերել վրան, **beat sb black and blue**, **узнуть до синеков** դարձվածքների առաջացումը: Մի՞թե որևէ ազգ կամ անհատ կարիք ունի դիմելու այլ լեզվի դարձվածքային կազմին դժբախտ ու տխուր օրը սև օր, **черный день** կամ **a black-letter day**, կամ չար կամ տխուր սիրտը սև սիրտ, **черное сердце**, **a black heart**՝ անվանելու համար, մի՞թե ուսումնասիրվող լեզուները կրող բոլոր ժողովուրդները չէին կարող երիտասարդ, միամիտ, անփորձ մարդուն համեմատել խակ, տհաս պտղի հետ և նրան անվանել կանաչ պատանի, **зеленый юнец**, **a green hand** /_goose և այլն:

Հայերենում և ռուսերենում առկա են սև կատու անցնել մեջքերով և **черная_кошка пробежала** դարձվածքները, որոնք ամենևին էլ պատճենման

արդյունք չեն, այլ միևնույն հավատալիքի՝ սև կատվի՝ գծտեցնելու ունակության: Ամենայն հավանականությամբ միևնույն զգացողության արդյունք են «խողորթունը լարել» և «տեսածին ու լսածին» անհավանական լինելու պատճառով, «չհավատալ» իմաստներն ունեցող ականջները սրել *навести уши, cock / strain one's ears* և աչքերին / ականջներին / չհավատալ, *не верить своим ушам / глазам, not to believe one's ears / eyes* համարժեք դարձվածքները: Հայերն ու ռուսերն ասում են մազից կախված, *всечем на волоске*, իսկ անգլիացիները՝ *hang on a thread* (թելից կախված), հայերը, ռուսներն ու անգլիացիներն ասում են մինչև կոկորդ, *no горло, up to one's throat*, ռուսներն ասում են նաև с головоу, *no уша* (ամբողջությամբ), իսկ անգլիացիները՝ նաև *up to one's neck / ears / eyes / elbows*, հայերն ասում են «կարմիր կովը կաշին չի փոխի» կամ «սևին սապոնն ի՞նչ կանի, խևին՝ խրատը», ռուսները՝ *черного кобеля не отмоетшь добела*, անգլիացիները՝ *does a leopard change its spots?* Աչքի միևնույն գլաուկոմա հիվանդությունը հայերն անվանում են սև ջուր, իսկ ռուսները՝ *желтая вода*, հիվանդության կամ հոգնածության հետևանքով ուշաթափվելու դեպքում հայերն օգտագործում են «աչքի սևն ու սպիտակը դեղնել», իսկ ռուսները՝ *в глазах зеленеет* դարձվածքները և այլն:

Այսպիսով, դարձվածքների ստուգաբանական վերլուծության ընթացքում պարզվում է. ա) կան դարձվածքներ, որ հատուկ են միայն այս կամ այն լեզվին, խորապես ազգային են, հատուկ միայն տվյալ ժողովրդի լեզվամտածողությանը, ուստի դրանց ստուգաբանության, բացատրության բանալին պետք է փնտրել միայն տվյալ լեզուն կրող ժողովրդի ազգագրության, մշակույթի, բանագիտության, պատմության, գրականության և այլ հարակից գիտություններում: Բ) կան բազմաթիվ համարժեք դարձվածքներ, որ պատճենվում են այլ լեզուներից: Այս դեպքում հարկ է, հնարավորության սահմաններում, դարձվածքի բացատրությունը գտնել այն լեզվում, որտեղ այն բուն դարձվածք է: Բացառված չէ, իհարկե, որ փոխառման կամ պատճենման դեպքում դարձվածքը ձեռք բերի նաև պատճենող լեզուն կրող ժողովրդի լեզվամտածողությանը բնորոշ իմաստներ: Գ) կան նաև բազմաթիվ համարժեք դարձվածքներ, որ ամենևին էլ իմաստային փոխառության կամ պատճենման արդյունք չեն: Չնայած բավականին հաճախ նկատվող կառուցվածքային կամ բաղադրիչային (բառային) տարբերությունների դրանք, իմաստային նույն դաշտում են, մի հանգամանք, որ վկայում է տարբեր ժողովուրդների լեզվամտածողության մեջ գոյություն ունեցող անառարկելի ընդհանրությունների մասին: Սա էլ իր հերթին, կարծում ենք, կնպաստի տարբեր լեզուների դարձվածաբանական համակարգերում գոյություն ունեցող լեզվաբանական հանրությունների բացահայտմանը: